

ԿԱՆԱԿԱՆԱՅ ԳԱՂՈՒԹԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Ա. Ա. ԲԵՔԱՐՅԱՆ

Կանադահայ դադութի ձևավորման ու զարգացման պատմությունը բաժանվում է երեք ժամանակաշրջանի՝ ա) տարագրության, բ) կազմավորման, գ) գաղութի բարգավաճման ու զարգացման: Սույն հոդվածում¹ քննվում է գաղութի պատմության երրորդ՝ գաղութի բարգավաճման ու զարգացման շրջանը, այսինքն՝ 1952-ից մինչև մեր օրերը:

1948—1952 թթ. ընթացքում կանադահայ կազմակերպությունների, հասարակական գործիչների, ինչպես նաև Կանադայի ազգային ներկայացուցիչների արդյունավետ աշխատանքի շնորհիվ 1952-ին վերացվեց հայերի Կանադա մուտք գործելու արգելքը, և սկսվեց նրանց կազմակերպված ներգաղթը Կանադա: Դրա շնորհիվ կանադահայ գաղութը սկսեց մեծանալ, ընդարձակվել, զարգանալ և 1950-ական թթ. կեսերից սկսած ստեղծել իր մշակույթը: Արգելքի վերացումն առաջին հերթին նպաստեց Կ. Պոլսի 1955-ի սեպտեմբերի դեպքերից² տազնապած հայերի՝ արտագաղթին: Այդ թվականից միայն Տորոնտոյում հաստատվեց մոտ 200 պոլսահայ, իսկ 200 հայ գաղթեց Հունաստանից, Սիրիայից, Լիբանանից, Եգիպտոսից և այլ երկրներից: Այսպիսով, արտագաղթի հետևանքով հայերի թվաքանակը Տորոնտոյում 1960-ական թթ. սկզբներին կազմեց շուրջ 600 մարդ³:

Հայերի ներգաղթը 50-ական թթ. հետո հիմնականում իրականացվում է 1948-ին ստեղծված Կանադական-հայկական կոնգրես (Canadian Armenian Congress) կազմակերպության⁴ միջոցով, որի առաջին նախագահը (ատենապետը) եղել է Հակոբ Մուրատյանը⁵ (Համիլտոն), որին 1952-ին փոխարինել է Երվանդ Փաստրմաճյանը⁶ (Մոնրեալ): Այդ կազմակերպության կատարած աշխատանքների շնորհիվ 1956-ին Կանադա գաղթեց շուրջ 100 հայ ընտանիք,

¹ Առաջին երկու շրջանների մասին տես Ա. Բեքարյան, Կանադահայ գաղութի կազմավորումը, «Քանրեր Երևանի համալսարանի», 1996, հ. 2:

² 1955-ի սեպտեմբերին կրոնական մոլեռանդությունը և ազգային փոքրամասնություններին ճնշելու քաղաքականություն վարող Ա. Մենդերեթի կառավարությունը Ստամբուլում և Իզմիրում կազմակերպեց հուլների և հայերի զանգվածային չարդ:

³ Տե՛ս Կ. Գլոբգան, Ամէնուն տարեգիրքը, Պէյրուս, 1962, էջ 343:

⁴ Հիշյալ կազմակերպության պաշտոնական ճանաչումից հետո (3 ապրիլի, 1948) նրա առաջին պատվավոր նախագահ է ընտրվել Լևոն Պապայանը, իսկ նրա մահից հետո, 1951-ին՝ Յուսուֆ Քարը:

⁵ Հ. Մուրատյանը ծնվել է 1892-ի դեկտեմբերի 25-ին Քղիի Առեք գյուղում: Ավարտել է Կարինի Արժնյաց վարժարանը և երկու տարի հաճախել Սանասարյան դպրոց: 1908-ին գաղթում է Կանադա և հաստատվում Համիլտոնում: Անգլերենին լավ տիրապետելուց և միջնակարգ կրթություն ստանալուց հետո երկու տարի հաճախում է համալսարան: 25 տարի շարունակ եղել է «Մետրոպոլիտան» ապահովագրական ընկերության Համիլտոնի մասնաճյուղի տնօրենը:

⁶ Ե. Փաստրմաճյանը ծնվել է 1906-ին Կեսարիայում: 1914—1918 թթ. գտնվել է Հալեպում, ապա տեղափոխվել է Իզմիր, այնուհետև՝ Սալոնիկ: Հունաստանից փոխադրվել է Փարիզ, իսկ 1925-ին՝ Կանադա:

որոնք Կանադայում իրենց ապրուստը երաշխավորող ազգակառններ չունեին: 1957-ին Ե. Փաստրմաճյանի եռանդուն ջանքերի շնորհիվ բացառության կարգով 80 հայի, որոնք ժամանել էին Կանադա որպես հյուրեր և ենթակա էին վտարման, թույլատրվեց մշտական բնակություն հաստատել Կանադայում: 1950-ական թթ. վերջերին և 60-ական թթ. սկզբներին Կանադական-հայկական կոնգրեսի, ինչպես նաև Մոնրեալի հայ հասարակական գործիչ Քերովբե Պտուկյանի⁷ ներդրած հսկայական ջանքերի շնորհիվ և անոուլ աշխատանքի արդյունքում բազմաթիվ հայ ընտանիքներ (շուրջ 2000 մարդ) Մեծափող Արևելքի երկրներում ստեղծված քաղաքական անկայուն դրության պատճառով Թուրքիայից, Լիբանանից, Եգիպտոսից, Սիրիայից, ինչպես նաև Լուսաստանից գաղթեցին Կանադա: Կանադա մուտք գործելու իրավունքից բացի գաղթողները հյուրընկալողներից ստանում էին նաև նյութական մեծ օժանդակություն: Այսպես, Միացյալ եկեղեցիների ընկերությունը փոխատվության ձևով վճարում էր գաղթողների ճանապարհածախսի երկու երրորդը՝ հետագայում մաս առ մաս վերադարձնելու պայմանով, իսկ հունահայերի հաստատման և մեկ երրորդը՝ դարձյալ փոխատվության ձևով, վճարում էր Քերովբե Պտուկյանը, որն ստանձնել էր նրանց հովանավորությունը⁸:

1961-ի հունվարին կանադահայերի թվաքանակը կազմում էր 3500 մարդ: Հայերի հոսքը շարունակվեց նաև հետագայում: 1979-ին Կանադայում առեին բնակվում էր մոտ 30 հազար հայ, որի կեսից ավելին՝ Մոնրեալում, 8 հազարը՝ Տորոնտոյում, մնացածը՝ Սենտ Փաթրիկոյում, Համիլտոնում, Քվեբեկում, Օտտավայում, Վինձորում, Վանկուվերում և այլուր⁹: Այժմ արդեն հայաշատ ուրախ Մոնրեալում ու Տորոնտոյում, ուր հայերը հիմնականում սկսել են հաստատվել 1950-ական թթ. կեսերից, նախկին երկրագործ գաղթականների համեմատ գերակշռող է քաղաքային կյանքով ապրող մտավորականներ, գիտնականների, բժիշկների, ինժեներների, դասախոսների, ուսուցիչների, ինչպես նաև արհեստավորների ու բանվորների նոր սերունդը: Ազգապահպան կյանքը համեմատաբար լավ է կազմակերպված մերոհիշյալ քաղաքներում, որտեղ ներկայումս գործում են շուրջ երկու տասնյակ հասարակական կամավերաբնակություններ ու հայկական մշակութային օջախներ, որոնք զբաղվում են նպաստում և աջակցում են կանադահայ գաղութի ազգային, մշակութային, ուսումնական ու մտղական կյանքի աշխուժացմանը: Մոնրեալում և Տորոնտոյում գործում են Հայկական բարեգործական ռեհանուր միություն (ՀԲԸՄ), Համազգային և Թեքեյան մշակութային միությունների մասնաճյուղերը, յաբաթօրյա և ամենօրյա ազգային մարտահանները: Վեոհիշյալ միությունների նախաձեռնությամբ այդ քաղաքներում տրվում են նաև հալեոհի ուղի- և հեոուստահադրդումներ, կազկակերպում մշակութային փաուտոներ, հայկական գորգերի, դրամների, պարերական մամուլի համարածուների քուսահանդեսներ, հայոո լեզվի և մշակույթի պատմության ոասրնթարներ, մարզական միոոգաոումներ, հայկական կինոկարնիեր ոուոարում, հայկական երաժշտության ունկնդում, գրական և սոարոմեսուական, երկուներ, ոասախոսություններ, թատերական ներկայադումներ և այլ աոոոոուո ձեոնարկումներ: Բացի դրանից, գաղութում աշխուժ սործունեություն են ծավալել նաև Հայ օգնության միության մասնաճյուղերը (Տորոնտոյում, Մոն-

7 Ք. Պտուկյանը (1907—1981) ծնվել է Սերաստիայում: 1915—1918 թթ. մոր և երկու եղբայրների հետ ապրել է Հայկում, իսկ այնուհետ տեղափոխվել է Կ. Պոլիս: Քեմալականների իշխանության գալուց հետո տեղափոխվել է Սոֆիա, իսկ 1926-ին՝ Կանադա:

⁸ Տե՛ս Կ. Գեորգեան, Եղվ. աշխ., էջ 335:

⁹ Տե՛ս ՀՄԸ, հ. 5, էջ 230:

րեալում, վանկուվերում, Համիլտոնում և այլուր), վանկուվերի հայ մշակութային միությունը, Մարաշի (Տորոնտոյում) և Պոլսահայ (Մոնրեալում) հայրենակցական միությունները, Մոնրեալի և Համիլտոնի ուսանողական միությունները, Հայ մարմնամարզական միությունը և այլն:

Հարկ է նշել, որ եթե մինչև 1970-ական թթ. վերջը կանադահայ գաղութում բավականին ակնառու էր նեղ հայրենակցական շրջանակներում սահմանափակվելու, տարբեր երկրներից գաղթածների՝ անպայման իրենց միությունն ունենալու, մյուսներից անկախ, գրեթե մեկուսացած գործելու ձգտումը, ապա սկսած 1980-ական թթ. կարծես թե աստիճանաբար տիրապետող է դառնում այն առաջադիմական մտայնությունը, որ նորանոր կազմակերպություններով արդեն գործողների թիվը ավելացնելու և ազգին օգտակար միջոցառումների ծավալման շրջանակները սահմանափակելու փոխարեն անհրաժեշտ է համախմբվել երկու-երեք կազմակերպությունների շուրջը, զորացնել և ավելի արդյունավետ ու նպատակասլաց դարձնել դրանց գործունեությունը:

Այսպիսով, կանադահայ գաղութի հայրենասեր ուժերը զովելի հետևողականությամբ, հաղթահարելով հսկայական դժվարություններ, լայն գործունեություն են ծավալում հայ բնակչության մեջ՝ ազգային ոգին վառ պահելու, նոր սերնդին հայկական կրթություն ու դաստիարակություն տալու, ձուլման վտանգից հնարավորին շփոթ զերծ պահելու համար: Դրան զգալիորեն նպաստում են նաև գաղութում գործող երգչախմբերը, թատերախմբերը և նվագախմբերը:

Բացի դրանից կանադահայերը միշտ ակտիվորեն մասնակցել են ու շարունակում են մասնակցել Կանադայի գիտական, տնտեսական, հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքին: Ոչ քիչ թվով աչքի ընկնող հայ գործիչներ ունեցել են և ունեն իրենց վաստակն ու ներդրումը Կանադայի տեխնիկայի, բժշկության, արվեստի, ինչպես նաև գիտական ու հասարակական գործունեության այլ բնագավառներում: Օրինակ, Արքայական համալսարանի աստամիայի ֆակուլտետի ղեկավար, դոկտոր Ջոն Բասմաճյանը ականավոր բժիշկ գիտնական է, մկանային հյուսվածքների ուսումնասիրման ու բուժման յուրահատուկ մեթոդի հիմնադիրը Կանադայում, Յուսուֆ Քարշը (Օսավա) աշխարհահռչակ դիմանկարիչ-լուսանկարիչ է, Համիլտոնի պողպատի ընկերության արտահանման ղեկավար, արդյունաբերող Ջավեն Մեարոպյանը օգնել է կանադական պողպատե արտադրանքների արտահանման զարգացմանը և վաճառքի կազմակերպմանը արտասահմանում, միջուկային ֆիզիկայի մասնագետ, դոկտոր Արա Մուրադյանը Կանադայի ատոմային կենտրոնի կիրառական հետազոտությունների ղեկավարն է, Կանադայի առաջին հայ քաղաքագուլիսը՝ Դիմի Ռիվեր քաղաքում, դոկտոր Ալբերտ Սաֆարյանը անվանի տնտեսագետ է¹⁰: Հայտնի են նաև աստղաֆիզիկոս Արշավիր Կյոնճյանը, հայագետ Գևորգ Պաղճյանը (որի նախաձեռնությամբ Մոնրեալի համալսարանում կազմակերպվել են հայագիտական դասընթացներ), Կանադայի նկարիչների Արքայական միության անդամ Արման Թադոսյանը, լուսանկարիչ Արթին Գավուբը, օպերային երգիչներ Սելմա Քեքլիկյանը և Դավիթ Վարժապետյանը, ջութակահար Ժիրայր Գանթարճյանը, բեմադրիչ Պերճ Ֆազլյանը և շատ ուրիշներ¹¹:

¹⁰ Տե՛ս «Parochial Newsletter», Toronto, 1967, Oct. 1, vol. 1, p. 8: Կ. Գևորգեան, «Ամէնուն տարեգիրքը», Պէլրութ, 1959, էջ 561:

¹¹ Տե՛ս «Նոր սերունդ», Տորոնտո, 1974, հ. 9-10, էջ 12, «Ապագա», Մոնրեալ, 1975, 18 հոկտեմբերի, «Հայրենիքի ձայն», 1976, 12 մայիսի, 1977, 14 դեկտեմբերի, 1979, 20 հունիսի, «Քուլիս», Կ. Պոլիս, 1980, հ. 795, էջ 21 և այլն:

Հարկ է նշել նաև, որ կանադահայ գաղութը մշտական սերտ կապեր է պահպանում մայր հայրենիքի հետ:

Այստեղ մենք առավել կանգ կառնենք Կանադայի հիմնական հայ գաղթավայրերի՝ Տորոնտոյի, Մոնրեալի, Վանկուվերի և Սենտ Քաթրինյի համայնքների զարգացման պատմության վրա, քանի որ դրանք որոշակի դեր են խաղացել և խաղում են կանադահայ գաղութի ազգային-հասարակական կյանքում:

1958-ին Տորոնտոյում ապրող հայերը համախմբվելով որոշում են «ազգային բերդ մը կառուցելու որպէսզի պաշտպանէին գալիք սերունդները օտար պաղ ու տաք հովերէն» և կառուցում ս. Երրորդության Հայաստանյայց եկեղեցին: «Գաղթական հայը իր պապերուն հաւատքին հետամուտ կը կառուցանէ նաև եկեղեցիին սրահը ուր կուզան խոսելու և երգելու հայ լեզուն»¹²: Եկեղեցու ծխական խորհրդի 1965-ի սեպտեմբերի 23-ի պաշտոնական հայտարարությունից¹³ պարզվում է, որ եկեղեցու հանդիսասրահը այսուհետև շարաթական մեկ անգամ ծառայելու է որպէս հայ հասարակության հավաքատեղի, իսկ նորակազմ գրադարանը՝ ընթերցասրահ: Նույն եկեղեցու ծխական խորհրդի աջակցությամբ 1974-ին ստեղծվեց «Գայանե» երգի-պարի համույթը, որը մեծ հաջողությամբ հանդես է եկել ոչ միայն Տորոնտոյում, այլև Օնտարիոյի այլ քաղաքներում՝ հայ երգն ու պարը ներկայացնելով ինչպես հայ, այնպես էլ օտարազգի բազմաթիվ ունկնդիրներին¹⁴: Ս. Երրորդության եկեղեցու ծխական խորհուրդը պարբերաբար կազմակերպում է նաև բազմադան միջոցառումներ մեր ժողովրդի բախտորոշ իրադարձությունների տարբեր տարեկիցների կապակցությամբ՝ երեկոներ ապրիլյան եղեռնի առթիվ, ճաշերույթ-հանդիսություններ նվիրված Սարգսրապատի հերոսամարտին, հայրենակցական միությունների հավաքույթներ և այլն¹⁵:

1967-ի հուլիսին Տորոնտոյում հիմնվեց Թեքեյան մշակութային միության մասնաճյուղը, որի անդամների նախնական հավաքատեղին նույնպես դարձավ ս. Երրորդության եկեղեցու հանդիսասրահը: Այդ միությունն իր հայրենասիրական ու ազգային դազափարներով բացառիկ տեղ է գրավում սփյուռքահայ մշակութային կյանքի զարգացման դործում կարևոր դեր կատարող մշակութային միությունների շարքում: Այսպես, Թեքեյան մշակութային միության շնորհիվ 1968-ից Տորոնտոյում տրվում են ամենօրյա հայերեն ուղիղ հաղորդումներ՝ մեկ ժամ տևողությամբ¹⁶: Այդ միության նախաձեռնությամբ հաճախակի կազմակերպվում են նաև մշակութային փառատոներ, հայկական դորգերի, դրամների, պարբերական մամուլի հավաքածուների ցուցահանդեսներ և այլ ազգօգուտ միջոցառում եր: 1980-ական թվականների սկզբներին Թեքեյան մշակութային միությունը հիմնեց իր սեփական «Ակումբ» կենտրոնը, որի վարչությանը կից 1982-ից գործում են կանանց ու երիտասարդության հանձնախմբերը և այլ հարակից մարմիններ: Այդ կենտրոնը շարաթական երկու անգամ կազմակերպում է հայոց լեզվի և հայ մշակույթի պատմության դասընթացներ, իսկ երիտասարդության հանձնախմբին կից գործում է պատանիների և աղջիկների պարախումբը:

1977-ից Տորոնտոյում գործում է Մարաշի հայրենակցական միությունը, որի նպատակն է կապ պահպանել աշխարհով մեկ ջրված վերապրող մարաշիների միջև:

¹² «Նոր սերունդ», Տորոնտո, 1973, հ. 8—9, էջ 9:

¹³ «Լրատու եկեղեցույց», Տորոնտո, 1965, հ. 17, 18, էջ 5:

¹⁴ Տե՛ս «Նոր սերունդ», Տորոնտո, 1974, հ. 9—10, էջ 15:

¹⁵ Տե՛ս, օրինակ, «Ապագայ», 1976, 29 մայիսի, 19 հունիսի, 21 օգոստոսի:

¹⁶ Տե՛ս «Ապագայ», 1984, 18 հունիսի:

1978-ին Տորոնտոյում հայ համայնքը ունեցավ իր առաջին ամենօրյա դպրոցը՝ ս. Խաչ Ազգային վարժարանը՝ իր մանկապարտեզով և առաջին դասարանով¹⁷: Այդ դպրոցը կարծես թե լրացրեց և ամբողջական դարձրեց մինչ այդ գործող ս. Սահակ-Մեսրոպ շաբաթօրյա վարժարանի¹⁸, ՀՕՄ-ի ամառային վարժարանի և Արփի Մերասի անձնական մանկապարտեզի երկար տարիների շնորհակալ աշխատանքը:

Սկսած 1977-ից Տորոնտոյում Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի շրջանավարտ, Արամ Խաչատրյանի բնութագրմամբ, մեծ կարողության տեր երգիչ Դավիթ Վարժապետյանի նախաձեռնությամբ ու ղեկավարությամբ գործում է «Կոմիտաս» երաժշտական միությունը, որը ոչ միայն հայ երգը, այլև ընդհանրապես հայ երաժշտական արվեստը տարածում է ինչպես Տորոնտոյում, նույնպես և Կանադայի և Ամերիկայի Միացյալ Նահանգների մի շարք քաղաքներում:

1980-ական թթ. տորոնտոհայ բնակչության թվաքանակը զգալիորեն աճեց և 1984-ի տվյալների համաձայն կազմում էր մոտավորապես 1500 մարդ¹⁹: Դրան զուգընթաց մշակութային և հայրենակցական շարժումները էլ ավելի աշխուժացան և նոր թափ ստացան: 1980-ական թթ. սկզբներին Տորոնտոյում սկսեց գործել Հայկական բարեգործական ընդհանուր միության Ալեք Մանուկյան մշակութային կենտրոնը՝ իր «Գալուստ Կյուլպենկյան» հարուստ զրադարանով, որտեղ կան հայ գրականությանը, սլաւոմիությանը, մըշակույթին վերաբերող բազմաթիվ գրքեր, հայկական հանդեսներ և թերթեր: Մշակութային կենտրոնի «Աճեմյան» և «Մածուկյան» սրահներում, որոնք միշտ բաց են հասարակայնության առջև, հաճախ են կազմակերպվում մարզական միջոցառումներ, հայկական կինոնկարների ցուցադրություն, հայկական երաժշտության ունկնդրություն և այլ միջոցառումներ: Ալեք Մանուկյան մշակութային կենտրոնում սկսեցին գործել նաև «Կոռնկ» պարախումբը (մեծերի և փոքրերի)՝ Լյուսի Քոմեիտիսյանի և «Սիփան» երգչախումբը՝ Հակոբ Մանուկյանի ղեկավարությամբ: Հայկական բարեգործական ընդհանուր միության Տորոնտոյի մասնաճյուղի նախաձեռնությամբ շաբաթը երեք անգամ գործում է «Արարատյան մշակույթ» հեռուստաժամը, իսկ մեկ անգամ՝ ռադիոժամը: Տորոնտոյում գործում է նաև Համազգային միությունը, որն ունի իննը հանձնախումբ՝ գրական, երաժշտական, թատերական, նկարչական և այլն: Այդ միությունը նույնպես կատարում է արդյունավետ և ստեղծագործ ազգապահպան աշխատանք՝ մաքառելով բազմաթիվ խոշորոտների ու դժվարությունների դեմ և քայլ առ քայլ հաղթահարելով դրանք:

Չնայած Մոնրեալի հայ գաղութը սկսել է ձևավորվել դեռևս 1920-ական թթ., սակայն, հայերը հիմնականում սկսել են հաստատվել Մոնրեալում 50-ական թթ. կեսերից: Մերձավոր Արևելքի մի շարք երկրների քաղաքական անկայուն վիճակը, հայերի համար ոչ նպաստավոր պետական վերափոխումները պատճառ դարձան բազմաթիվ հայ ընտանիքների անակնկալ գաղթին, որոնք խումբ առ խումբ եկան և հաստատվեցին Մոնրեալում և Կանադայի մյուս քաղաքներում: Հայի ճակատագիրը կարծես մի անգամ ևս նրան ենթարկեց ծանր փորձություն: Հայերը ստիպված հեռացան այն երկրներից, ուր ապաստան էին գտել Առաջին համաշխարհային պատերազմից հետո, ստեղծել ի-

¹⁷ Տե՛ս «Կանադահայ մամուլ», Տորոնտո, 1978, հ. 10—12, էջ 2:—«Մասիս», Տորոնտո, 1981, հ. 1, էջ 5:

¹⁸ Հարկ է նշել, որ ս. Սահակ-Մեսրոպ վարժարանը կազմավորվել է տորոնտոհայ հասարակական կազմակերպության գործիչ Գևորգ Սեմերճյանի (1904—1962) ջանքերով դեռևս 1934-ին ստեղծված Սահակ-Մեսրոպ շրջիկ դպրոցի հիման վրա:

¹⁹ «Ապագայ», 1984, 18 հունիսի:

րենց ընտանեկան բույնը, կազմակերպել գաղութներ, որտեղ անընդհատ ե-
ռացել էր հայ կյանքը՝ իր եկեղեցիներով, դպրոցներով, մշակութային և մար-
զական միություններով, ակումբներով ու սրահներով հանդերձ: Սակայն,
այդ երկրներում ենթարկվելով քաղաքական ու տնտեսական հալածանքի, հա-
յերը ստիպված եղան լքել տասնյակ տարիների ընթացքում ստեղծած իրենց
«տունն ու եկեղեցին, դպրոցն ու ակումբը, թափառական հայու ցուպը դար-
ձնալ ձեռք առած եկած ու հաստատուած էին Գանատայի այս հեռուոր ափե-
րը»²⁰:

Այստեղ արժե նշել, որ օտարութայան մեջ ապրող հայերը, մի անգամ ևս
ընտրելով անծանոթ և անապավեն տարագրութայան ուղին, կրկին դառնալով
գաղթական, այնուամենայնիվ, իրենց հետ բերեցին այն, ինչ անբաժան էր ի-
րենց արյունից ու էությունից՝ պատվասիրութայան և ազգային արժանապատ-
վութայան բարձր զգացումը: Նույնիսկ երկու հարյուր հոգի շկազմող հայ տղա-
մարդիկ ու կանայք, 50-ական թթ. կեսերին հաստատվելով Մոնրեալում ան-
ստույգ, անորոշ ապագայով, սկսել են խոսել, խորհել, վիճաբանել, երազել
ոչ թե անձնական բարօրութայան, սեփական ընտանիքի կերտման ու վայելք-
ների, այլ օտարութայան մեջ ազգապահպան աշխատանքին լծվելու, հայեցիու-
թյունը պահպանող տաճարների և օջախների ստեղծման մասին: «Ու մէկ օր,
մի երջանիկ օր, հարիւր տասը հոգիի շափ մարդիկ ու կանայք, կը հաւա-
քուին Մոնթրէալի հին ու համեստ պանդոկներէն Քուինզ Ղոթէլի մէջ, (ոչ
Քուին էլիզապէթը), հաւաքական երգումի, նուիրաբերումի յուզիչ արարողու-
թեան: Այդ օրը, անոնք բոլորը, բոլորը, կը բանան իրենց սրտի հետ գրպաննե-
րը, կու տան աւելին քան ունին, կը խոստանան տալ աւելին՝ նաեւ վաղը եւ
մի՛շտ որպէսզի հայութիւնը հոն, թէկուզ փոքր թիւով, ու տկար տնտեսապէս,
լմնայ անտուն, լմնայ որբ փարթամ այս քաղաքին մէջ»²¹: Եվ այսպես, 1958-ի
հունիսին այդ համեստ պանդոկում ճաշկերույթի հրավիրված հայրենասեր փոք-
րաթիվ մարդկանց եռանդուն ջանքերով Մոնրեալում հիմնվեց մշակութային
ակումբ և ս. Հակոբ եկեղեցին²²: Այդ համեստ մշակութային կենտրոնից հետո
մոնրեալցիները վերջին տարիներին հիմնել են նաև «Ա. Ահարոնյան» սրահը,
«Հորիզոն» շաբաթաթերթի գրաշարատուն-խմբագրատունը և վարչական սեն-
յակները, շաբաթօրյա և ամենօրյա վարժարանները և այլն:

Այսպիսով, 1958-ին «Քուինզ» պանդոկում ստեղծված ոգին էր, որ այդ
գեղատեսիլ քաղաքում հիմք դրեց Հյուսիսային Ամերիկայի հայադրոշմ գա-
ղութներից մեկին, գաղութ, որ օրըստօրե բազմանում էր, սակայն սկզբնա-
կան շրջանում կանգնած էր ձուլման վտանգի՝ առջև, քանի որ հայ փոքրիկնե-
րը արդեն սկսել էին հաճախել անգլիական: և ֆրանսիական վարժարաններ:
Սորահաս սերնդի ապագան մտահոգում էր բոլորին: Ուստի շտապ կարգով
անհրաժեշտ էր ստեղծել մի այնպիսի դպրոց, որտեղ հայ մանուկը հնարավո-
րություն ունենար գոնե շաբաթը մեկ անգամ ծանոթանալու մեր հիասքանչ
լեզվի գաղտնիքներին, կարողանար թոթովել և կարդալ մայրենի լեզվով, ինչ-

²⁰ «Հորիզոն», Մոնրեալ, 1980, 19 մայիսի, էջ 2:

²¹ «Հորիզոն», Մոնրեալ, 1983, 27 յունիսի, էջ 8:

²² Մշակութային ակումբ հիմնելու նպատակով ճաշկերույթի հավաքված մոնրեալահայերի
հանգանակութամբ գոյացավ 15—16 հազար դոլար: Ամերիկայի ազգային կենտրոնական վար-
չությունն իր հերթին տասը հազար դոլար հատկացրեց Մոնրեալի հայերին: Նրանք որոշեցին ա-
կումբի հետ միասին հիմնել նաև եկեղեցի: 25 000 դոլարով Սեն-Ջոթիք փողոցի վրա ձեռք բեր-
եց մի փոքրիկ շինություն՝ իր ներքնահարկով: Այն 1909-ին կառուցված էր իր բոլորական եկեղե-
ցը, իսկ 1925-ից արդեն օգտագործվում էր որպես դեղորայքի գործարան: Մոնրեալի հայ գաղութի
ձեռքն անցնելու ժամանակ այդ շենքը շատ խարխուլ, անմխիթար վիճակում էր և միայն վերա-
նորոգումից հետո հնարավոր եղավ այն օգտագործել (տե՛ս «Հորիզոն», Մոնրեալ, 1983, 27
հունիսի):

պես նաև օքոյվ քոյի գալով իրարու հետ... ապրիլ հայ մթնոլորտի մէջ, շնչել հայ տան մէջ, հայու յարկին տակ, գոնէ շարաթը մէկ օր, յարատեւեցնելու համար հայութեան գոյատեւումը, յաւերժացնելու համար մեր դարաւոր հայկեան ցեղը»²³: Այս ցավերով ու խոհերով էր տարված նաև բազմամաստակ ուսուցիչ Սեդրակ Բարաղամյանը, որը ս. Հակոբ եկեղեցու ծխական խորհրդի աջակցութեամբ 1958-ի հոկտեմբերի 1-ին հիմնադրեց Մոնրեալի Շարաթօրյա վարժարանը՝ 25 երկսեռ աշակերտներով²⁴: Վարժարանը ուներ մանկապարտեզի երկու և դպրոցի երեք դասարան: Ուսուցչական կազմը բաղկացած էր երկու հոգուց՝ Սեդրակ Բարաղամյանը և իր դուստրը՝ Ալիս Բարաղամյանը (հետագայում՝ տիկին Առաքելյան): Հաջորդ տարին Ս. Բարաղամյանի վարժարանի տնօրինութիւնը ստանձնում է համայնքի ծխական խորհուրդը:

1959—60 ուսումնական տարեշրջանում Շարաթօրյա վարժարանի աշակերտութիւնը բաժանվում է երկու մասի: Նախորդ տարեշրջանի 44 երկսեռ աշակերտութեան գերակշռող մասը՝ 38 հոգի, ուսման նպատակով հավաքվում է ս. Հակոբ եկեղեցում, և հիմք է դրվում ս. Հակոբ եկեղեցու Շարաթօրյա վարժարանին: Հետագայում աշակերտութեան թվաքանակը հասավ մինչև երեք հարյուրի: Հիշելով հորը՝ Սեդրակ Բարաղամյանին, Վահագն Բարաղամյանը գրում է. «Հայրս պարզ մարդ մըն էր: Իր կեանքը անցուցեր էր ամէն առտու գործին՝ դպրոց վազելով որ օտարութեան մէջ մեծցող հայ տղուն քանի մը հայերէն տող կարդալ վարժեցնէ: ... Ի՞նչ գրել եւ ինչպէ՞ս գրել մարդու մը մասին, որուն քսան տարեկանի աղուամազ պեխերը հազիւ հասած, Պոլիսի Օրթաքէօյէն, մինչեւ իր խոր ծերութիւնը, Մոնրէալի «Պիւպիլիին տակ» հանգերգեր էր Այր-բեն-գիմ... հայկական գաղութներուն մէջ մասնաւոր մեծ գործեր չէր տեսած, եւ ոչ ալ մեծ նուիրատուութիւններ ըրած էր: Միայն հայրենիքէն հեռու մեծցող հայ տղաներուն կրկներ էր. «... Այր-բեն-գիմ: ... Ազգը կը գրուի գայ-ով եւ գիմ-ով: Իսկ Հայաստանը՝ գլխազիր հոյ-ով»²⁵: Սեդրակ Բարաղամյանից հետո Շարաթօրյա վարժարանի տնօրենի պարտականութիւնները ստանձնել են Վիկտորյա Հովսեփյանը, Սոնա Տեր-Սարգիսյանը (Ալեքսանյան), Անահիտ Մարգարյանը (1972—1974), Հակոբ Սիմոնյանը (1974—1977), Լորիս Մալոյանը (1977—1979), Նազարեթ Սեֆերյանը (սկսած 1980-ից)²⁶:

1973-ի սեպտեմբերից ս. Հակոբ եկեղեցուն կից սկսում է գործել Հայ Սգնութեան Միութեան ծաղկոցը (մանկապարտեզը)՝ քառասունհինգ փոքրիկներով՝ հաջորդ տարին դպրոց դառնալու միտումով: Մի քանի ամիս անց փոքրիկների թիվը հասնում է վաթսուհին: 1974-ի սեպտեմբերին հարյուր երեսուն երկսեռ աշակերտներով բացվում է ս. Հակոբ եկեղեցու ամենօրյա վարժարանը՝ նախակրթարանով և մանկապարտեզի ծիլ, բողբոջ, կոկոն, ծաղիկ դասարաններով: Այս երկու հաստատութիւնների տնօրենն էլ Վանուհի Իսաչանյանն էր: Ինչպես անցյալի մեր վարժարաններն ու կրթական օջախները, այնպես էլ Մոնրեալի համայնքի վարժարանները, եղել են մեր ժողովրդի հավատի ու հույսի կենտրոններ, որոնց շնորհիվ պահպանվել է մեր լեզուն, մըշակույթը, ինչպես նաև մեր ազգը, քանի որ դրանք կրթել ու դաստիարակել են նորահաս սերնդին՝ ներշնչելով նրան ազգային ոգի, հայկականութիւն և հայեցի կյանք: 1971-ին Մոնրեալում ստեղծվում է «Արարատ» ճամբարը՝ 5-

²³ «Հորիզոն», Մոնրեալ, 1980, 19 մայիսի, էջ 2:

²⁴ Նույն տեղում:

²⁵ «Հորիզոն», Մոնրեալ, 1980, 19 մայիսի, էջ 2:

²⁶ Ավելի մանրամասն տե՛ս «Լրաբազ», Մոնրեալ, 1979, յունար-փետրար, ք. 145, փետրարի, էջ 17, և 1980, յունիս-յուլիս, ք. 155, Ի տարի, էջ 4:

ից 11 տարեկան 150 պատանիներով, որը մինչև այժմ գործում է ամառվա ամիսներին:

1960-ից սկսած զանգվածային ներգաղթի (հիմնականում Հունաստանից և Մերձավոր Արևելքի երկրներից) հետևանքով հայության թվաքանակը Մոնրեալում աճեց և 1970-ական թվականների սկզբին արդեն կազմում էր 15 հազար մարդ²¹: Գրա հետ զգալիորեն աճեց նաև Մոնրեալում գործող հայկական կազմակերպությունների միությունների քանակը:

Մեր ձեռքի տակ եղած տվյալների²² համաձայն Մոնրեալում գործում են բազմաթիվ հայկական եկեղեցիներ (ս. Հակոբ Հայաստանյայց Առաքելական, ս. Գրիգոր Լուսավորիչ Հայաստանյայց, Նարեկա ս. Տիրամայր Հայ Կաթողիկե, Հայ Ավետարանական և այլն), կազմակերպություններ (Հայկական բարեգործական ընդհանուր միության մասնաճյուղն ու Պոլսահայ միությունը՝ բրենց սեփական կենտրոններով, Թեքեյան և Համազգային հայ մշակութային միությունների մասնաճյուղերը, «Պարույր Սևակ» մշակութային միությունը, Արմենյան թատերախումբը, Հայ բժիշկների միությունը, Հայ մարմնամարզական ընդհանուր միությունը, Հայ ուսանողական միությունը և այլն) և վարժարաններ (ս. Հակոբ եկեղեցուն կից Հայ Օգնության միության ծաղկոցը, ս. Հակոբ եկեղեցու շաբաթօրյա և ամենօրյա վարժարանները, ՀԲԸՄ-ի «Ալեք Մանուկյան-Արմեն Քեպեք» վարժարանը, ս. Գրիգոր եկեղեցու շաբաթօրյա վարժարանը և այլն):

Այժմ համառոտակի անդրադառնանք Մոնրեալի հայ համայնքի մի շարք կազմակերպությունների և միությունների գործունեությանը:

Մոնրեալում Համազգային հայ մշակութային միության մասնաճյուղը հիմնադրվել է 1963-ին, իսկ Թեքեյան մշակութային միության մասնաճյուղը՝ 1969-ին: Հիշենք, որ առաջինի կենտրոնը հիմնվել է 1928-ին Կահիրեում, ապա փոխադրվել Բեյրութ, իսկ երկրորդը ստեղծվել է 1947-ին Բեյրութում: Համազգային հայ մշակութային միության Մոնրեալի մասնաճյուղն ունի երգչախումբ, պարի խումբ, թատերախումբ և զրադարան: Մասնաճյուղը հաճախակի կազմակերպում է ցուցահանդեսներ, գրական-գեղարվեստական երեկոներ: Բավական ընդարձակ գործունեություն է ծավալել նաև Թեքեյան մշակութային միության մասնաճյուղը, որը նույնպես ունի երգչախումբ, պարի խումբ, թատերախումբ, ինչպես նաև իր սեփական շենքը: Վերջինս ներկայումս դարձել է Մոնրեալի հայության գլխավոր հավաքատեղիներից մեկը: Մասնաճյուղի կենտրոնական վարչության նախաձեռնությամբ գործում է «Թեքեյանի ձայն» ռադիոժամր, որն ամեն կիրակի ձայնասփռում է հայ ժողովրդական ու դասական երաժշտություն, ինչպես նաև ներգաղութային և հայրենիքից ստացված լուրեր:

1963-ին հիմնադրվել է նաև «Մամիկոնյան» մշակութային հանձնախումբը, որը գործում է Մոնրեալի ս. Գրիգոր Լուսավորիչ Հայաստանյայց Առաքելական եկեղեցուն կից և պարբերաբար կազմակերպում է գրական երեկոներ, թատերական ներկայացումներ, ցուցահանդեսներ և այլ ազգօգուտ միջոցառումներ ու ձեռնարկումներ:

Առանձնապես հետաքրքիր է Պոլսահայ հայրենակցական միության գործունեությունը, որի մշակութային և թատերական հանձնախմբերը տարեկան կազմակերպում են հինգ-վեց միջոցառում՝ գեղարվեստական երեկոներ, դա-

²¹ «Արձագանգ», Տորոնտո, հ. 8, 1974, էջ 18:

²² Տե՛ս «Արձագանգ», 1973, հ. 6, էջ 8—9, «Լրաքաղ», Մոնրեալ, 1973, մայիս-յունիս, էջ 121, «Լրաքաղ», Մոնրեալ, 1979, յունար-փետրար, էջ 17, «Հորիզոն», Մոնրեալ, 1980, 19 մայիսի, «Հորիզոն», Մոնրեալ, 1983, 27 հունիսի, էջ 8, 9 և այլն:

սախտություններ, ներկայացումներ և այլն: Միությունն ունի իր սեփական շենքը և հրատարակում է «Գեղարդ» խմորատիպ եռամսյա հանդեսը:

Բացի դրանից Մոնրեալի համալսարանում գործում է Հայ ուսանողական միությունը, իսկ դեռևս 1958-ին ստեղծվել է Հայ մարմնամարզական ընդհանուր միությունը՝ բասկետբոլի, ֆուտբոլի և այլ մարզաձևերի բաժանմունքներով:

Բրիտանական Կոլումբիա նահանգի Վանկուվեր քաղաքը Կանադայի երրորդ հայաշատ քաղաքն է՝ Մոնրեալից և Տորոնտոյից հետո: Սակայն մինչև 1960-ական թթ. Վանկուվերի հայ համայնքը եղել է սակավաթիվ՝ բաղկացած ընդամենը տասը ընտանիքից, որոնք իրար հետ կապված են եղել տարին մեկ անգամ հանդիպելով: Եվ միայն սկսած 1960-ական թվականներից, երբ բազմաթիվ հայ ընտանիքներ Կիպրոսից, Եգիպտոսից, Հունաստանից, Սիրիայից, Լիբանանից, Հորդանանից, Իսրայելից, Ֆրանսիայից և Իրանից տեղափոխվեցին ու հաստատվեցին Վանկուվեր, դրուժյունը զգալիորեն փոխվեց: Այսպես, 1975-ին հայերի թվաքանակը Վանկուվերում կազմում էր շուրջ 500 մարդ²⁹, 1981-ին՝ մոտ 700 մարդ³⁰, իսկ 1985-ին՝ արդեն 1500 մարդ³¹:

Վանկուվերի հայերը մեծավ մասամբ ունեն իրենց գործարանները, խանութները և ընկերությունները: Նրանց մեջ կան նաև պետական պաշտոնյաներ: Տարին մի քանի անգամ զանազան առիթներով համայնքում կազմակերպվում են հավաքույթներ, տոնախմբություններ, երեկոներ, հրապարակային դասախոսություններ, հանդիպումներ և այլն: Այդ միջոցառումներին հաճախակի մասնակցում են Տորոնտոյի, Լոս Անջելեսի և այլ հայաշատ վայրերի ներկայացուցիչներ:

Վանկուվերի համայնքն ունի մի շարք կազմակերպություններ, որոնցից հնագույնը 1968-ին ստեղծված Հայ մշակութային միությունն է: Վերջինս տարիներ շարունակ համախմբել է համայնքի աշխատանքները, մասնակցել միջազգային փառատոների, կազմակերպել հավաքույթներ, ցուցահանդեսներ, գրական երեկոներ, պարահանդեսներ, ճաշկերույթներ, մեր ազգային մշակույթը ծանոթացրել օտարներին³²: Միությունը մեծ ուշադրություն է դարձնում 1969-ից Վանկուվերի հայ համայնքում գործող հայկական շարաթօրյա դպրոցին՝ «Հայ դպրոցին», ուր հաճախում են անխտիր բոլոր երեխաները, ընդ որում թե՛ դպրոցի տնօրենը, թե՛ ուսուցիչները աշխատում են հասարակական կարգով անելով ամեն բան, որպեսզի հայրենիքից հեռու այս քաղաքում ապրող հայ փոքրիկները հնարավորություն ունենան սովորելու իրենց մայրենի լեզուն և ծանոթանալու բազմահարուստ հայ մշակույթին ու պատմությանը³³: Դպրոցի աշակերտների թվաքանակը հասնում է 30—40 հոգու: Դպրոցն ունի երեք դասարան՝ նախնական, միջին և բարձրագույն: Դպրոցում ուսուցանում են հայերեն, հայոց պատմություն և արդի Հայաստանի աշխարհագրություն: Բացի դրանից դպրոցում կարևոր նշանակություն են տալիս հայ երգի և պարի ուսուցմանը, ինչպես նաև երեխաների ֆիզիկական դաստիարակությանը: Ինչպես վերապատմում է «Հայ դպրոցի» հանդեսներից մեկի ականատեսը, այսօրվան հեռու մեր հայրենի հողէն, այսօրվան փոքր ոյժերով, ինչպես կրնանք

²⁹ «Արձագանգ», Տորոնտո, 1975, հ. 4—5, էջ 19:

³⁰ «Քուլիս», 4. Պոլիս, 1981, հ. 833, 1 սեպտեմբերի, էջ 21:

³¹ «Հորիզոն», Մոնրեալ, 1985, 12 օգոստոսի, էջ 2:

³² «Մանթոթիսիս Վանկուվերի հայ գաղութին», «Արձագանգ», Տորոնտո, 1975, հ. 4—5: էջ 19:

³³ «Քուլիս», 4. Պոլիս, 1980, 2 փետրվարի, հ. 795, էջ 15, «Հայրենիքի ձայն», 1978, 2 օգոստոսի:

ունենալ «Հայ Դպրոց» մը եւ մանաւանդ ունենալ ամենավերջի հանդէս մը: Ի՞նչպէս կրնանք լսել այս փոքրերը, որոնք ծնած ու մեծցած են այս օտար արեւմտեան վրայ, սակայն այս օտար արեւմտեան քայլերգը երգելէ ետք կ'երգեն, կը պարեն, կ'արտասանեն հայերէն:

«Հայ Ծնք Մենք, Եղբայրներ, Հայ Ծնք Մենք» խմբերգով վերջ գտավ հանդէսը⁸⁴:

Հայ մշակութային միութեանը կից գործում է նաև Հայ կանանց հանձնախումբը, որը պարբերաբար կազմակերպում է իր ամենամսյա հավաքույթները:

Վանկուվերի հայ համայնքում աշխույժ գործունեություն է ծավալել 1980-ին հիմնված Բրիտանական Կոլումբիայի ս. Վարդան Հայաստանյայց եկեղեցին իր ծխական խորհրդով (նախագահ՝ Գևորգ Քաջազնունի) և բազմազան մարմիններով՝ երգչախմբով, վարժարանով, Կանանց, Արվեստի և այլ հանձնախմբերով: Ս. Վարդան եկեղեցին իր շուրջն է համախմբել նաև Վանկուվերում գործող ՀԲԸՄ-ի (նախագահ՝ Բենիամին Խուրշիտյան), ԹՄՄ-ի (նախագահ՝ Սուրիկ Սևանբուր), Թամկավար ազատական կուսակցության (նախագահ՝ Գրիգոր Մանտոսյան), Պոլսահայ միութեան (նախագահ՝ Լեոն Սեմիրամիս) մասնաճյուղերը և համաձայնացրել դրանց գործողությունները: Բացի դրանից, այդ կազմակերպություններին զուգընթաց Վանկուվերում գործում են դեռևս համայնքի ձևավորման սկզբնական շրջանում ստեղծված Հայ մշակութային միությունը, ՀՕՄ-ի մասնաճյուղը և այլն⁸⁵:

Վանկուվերի գացթօջախը, որը Կանադայի արևմտյան մասում գտնվող միակ մեծ համայնքն է, անընդհատ ձգտում է, ջանում է ամերիկերտ մէկ օրինակը դառնալ այն միւս մեծ գաղութներուն որ կը գտնուին Գանատայի արեւելեան մասին մէջ. սակայն աշխարհագրական դիրքին պատճառով ստեղծուած կղզիացումը կրնայ ամենամեծ դժուարութիւններ ստեղծել սոյն գաղութին համար»⁸⁶, այն դեպքում, երբ Կանադայի արևելյան քաղաքների հայ համայնքները իրենց կազմավորման սկզբից ևեթ հաղորդակցական սերտ կապի մեջ են և փոխադարձաբար օգնում են իրար մշակութային ու այլ ազգապահպան միջոցառումներ կազմակերպելու և անցկացնելու գործում:

Վերոհիշյալ կազմակերպությունները բեղուն գործունեություն են ծավալել Վանկուվերի համայնքում և ձգտում են այնտեղ կատարվող ազգապահպան աշխատանքները հասցնել կանադահայ լավագույն գաղթօջախների մակարդակին:

1981-ի սեպտեմբերից Վանկուվերի համայնքում ս. Վարդան եկեղեցուն կից գործում է «Արագ» շաբաթօրյա վարժարանը (տնօրեն՝ Վազգեն Մուխեյան)՝ ՀՕՄ-ի տեղի մասնաճյուղի վարչական պատասխանատվությամբ: Վարժարանում դասավանդվում է արևմտահայերեն, արևելահայերեն, կրոն և պատմություն⁸⁷:

Ինչպես Կանադայի մյուս հայաշատ քաղաքներում, նույնպես Վանկուվերում, հայերն զբաղվում են նաև գորգի առևտրով: Այսպես, հայտնի է բնիկ զեյթունցի Գ. Քաջազնի (Քաջազնունու) պարսկական գորգի «Արարատ» վաճառատունը: Գևորգ Քաջազնի և իր աշխատակից Վաղարշակ Անրզյանը, որը քաղաքական տագնապներից դրդված 1950-ական թվականներին հեռացել է

⁸⁴ «Արձագանգ», Տորոնտո, 1975, հ. 6—7, էջ 13:

⁸⁵ «Ապագայ», Մոնրեալ, 1984, 16 ապրիլի:

⁸⁶ «Արձագանգ», Տորոնտո, 1975, հ. 4—5, էջ 20:

⁸⁷ «Հորիզոն», Մոնրեալ, 1981, 14 սեպտեմբերի:

Ծրուսաղեմից, առաջին հայ պանդուխտներից են, որոնք հաստատվել են Վանկուվերում³⁸։

Ինչպես նշվել է կանադահայ գաղութի պատմությանը նվիրված մեր նախորդ հոդվածում, Սենտ Քաթրինզում առաջին հայերը հաստատվել են դեռևս քսաներորդ դարի սկզբին, սակայն, չնայած այդ հանգամանքին, 60-ական թթ. սկզբներին նրանց թվաքանակը կազմում էր ընդամենը յոթ հարյուր մարդ, ընդ որում քղեցիները կազմում էին 45 ընտանիք, իսկ տարոնցիները՝ 30։ Մյուս կողմից, չնայած փոքրաթիվ լինելուն, Սենտ Քաթրինզի հայ համայնքը մշտապես ծավալել է լայն ու խանդավառ ազգապահպան գործունեություն։ Այսպես, թե քղեցիները, թե տարոնցիները ունեն իրենց Հայրենակցական միությունների մասնաճյուղերը։ Բացի դրանից, 1960-ական թթ. Սենտ Քաթրինզը ունեցել է նաև իր հինգ հոգուց բաղկացած հայկական նվագախումբը՝ Հակոբ Տերտերյանի ղեկավարությամբ, որը մասնակցել է ազգային հավաքույթներին ու միջոցառումներին³⁹։ Նշենք նաև, որ Սենտ Քաթրինզում գործում են Կանադայում հիմնված առաջին հայկական ակումբներից մեկը՝ դեռևս 1934-ին ստեղծված «Անդրանիկ» ակումբը, և «Յառաջ» վարժարանը⁴⁰։

Բացի Մունրեալից, Տորոնտոյից, Վանկուվերից և Սենտ Քաթրինզից փոքր քանակությամբ հայեր են բնակվում նաև Կանադայի այլ քաղաքներում՝ Օտտավայում, Համիլտոնում, Բրանդֆորդում, Քվեբեկում, Վինձորում, Լոնդոնում, Վիննիպեգում, Հալիֆաքսում, Քիթչեներում և այլուր։

Վերջացնելով մեր համառոտ ակնարկը կանադահայ գաղութի կազմավորման և զարգացման վերաբերյալ, հանգում ենք այն կարևոր համոզման, որ, չնայած պատմության բերած անակնկալ բազմաթիվ աղետներին, հայերը Կանադայում կարողացան պայմաններ ստեղծել օտարության մեջ ապաստանած հայորդիների համար հայրենի ապրելու, շտաբանալու, շնորհվելու։

А. А. БЕКАРЯН—Развитие армянской колонии в Канаде.— В статье, которая является органическим продолжением статьи, опубликованной в № 2 (89) 1996 г. «Вестника», изучается последний, третий период становления армянской колонии Канады—период ее процветания и развития, т. е. от 1952 г. до наших дней. В этот период в Канаде (особенно в Монреале и Торонто) взамен прежних земледельцев-переселенцев стали обосновываться в основном ведущие городской образ жизни интеллигенты, ученые, врачи, инженеры, преподаватели, а также ремесленники и рабочие. Сейчас в Канаде функционирует более двух десятков общественных и культурных организаций, по инициативе которых издаются газеты и журналы, проводятся радио- и телепередачи на армянском языке, культурные фестивали, выставки коллекций армянских ковров, монет, курсы по истории армянского языка и армянской культуры, показ армянских кинофильмов, слушание армянской музыки, литературные и художественные вечера, театральные представления и другие полезные для нации мероприятия и начинания.

³⁸ «Բուրաստան», Մոնրեալ, 1970, հ. 76, էջ 13, «Ապագայ», Մոնրեալ, 1986, 28 ապրիլի, էջ 6։

³⁹ Կ. Կնոզեան, «Ամենուր տարեգիրք», 1962, էջ 347, Ա. Աշեան, Վիճակացոյց եւ պատմութիւն Առաջնորդական թեմին Հայոց Ամերիկայի. 1948, Հրատ. Ամերիկայի Հայոց Առաջնորդարանին, Նիւ-Նորք, 1949, էջ 228։

⁴⁰ «Հարիզոն», Մոնրեալ, 1985, 12 օգոստոսի, էջ 2։